Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ ԹԻՎ 41-Ա, 42-Ն, 43-Ա, 44-Ա, 45-Ա, 46-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 42-Ն որոշման համարակալումը սխալ է կատարված:

Թիվ 45-Ա որոշման ներքևի մասում գրառված է՝ կողմ 9, սակայն առկա է ավագանու 8 անդամի ստորագրություն:

Բացի այդ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն օգտակար հանածոների արդյունահանման համար նախատեսված հողամասերը տրամադրվում են ընդերքի օգտագործման իրավունք հաստատող փաստաթղթերին համապատասխան: Ընդերքօգտագործողներին նոր հողամասեր չեն կարող տրամադրվել, եթե նրանց գործունեության արդյունքում նախկինում խախտված հողերը վերականգնման նախագծերին համապատասխան չեն վերականգնվել: Իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 44-րդ կետի «ը» ենթակետի համաձայն, հողամասը առանց մրցույթի վարձակալության են տրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց, ինչպես նաև պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու դեպքում:

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 3-ի թիվ 45-Ա որոշմամբ պարզ չէ, «Գրիգներս» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը տվյալ հողատարածքում օրենքով սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձ է, թե ոչ:

Որոշման նախաբանում հղում է կատարված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետին, սակայն որոշուման մեջ դրույթ չի ընդունվել համայնքի հողերի օգտագործման սխեման հաստատելու մասին:

Թիվ թիվ 41-Ա, 42-Ն, 43-Ա, 44-Ա, 45-Ա, 46-Ն որոշումներում չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը:

21.08.2020թ.